ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3986-Ա «17» հոկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանը՝

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝

1) սույն որոշման հավելվածի համաձայն՝ կազմակերպել և ապահովել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ենթակայությամբ գործող «Երևանի «Փոքրիկ երկիր» հ. 91 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 92 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 93 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.94 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.95 մսուր-մանկապարտեզ» և «Երևանի «Հեքիաթ» հ.96 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ.97 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենների (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոններն զբաղեցնելու մրցույթների (այսուհետ՝ Մրցույթ) նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման իրականացումը.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության օժանդակությամբ ապահովել սույն որոշման հավելվածին համապատասխան, հայտարարության հրապարակումը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում՝ (www.yerevan.am).

3) ապահովել մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներից դիմումների և դիմումին կից ներկայացվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը և մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

2.Ընդունել ի գիտություն, որ մրցույթն անցկացվելու է Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման N 1 դահլիճում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
2024թ. հոկտեմբերի 17 -ի
հ. 3986-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Թափուր պաշտոնի անվանումը	Մրցույթ անցկացնելու վայրը, օրը և ժամը	Հայտարարության հրապարակման օրը
1.	«Երևանի «Փոքրիկ երկիր» հ. 91 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Հովնաթանի 11)	ք. Երևան, Արգիշտիի 1 18.11.2024թ. ժամը՝ 14:30	18.10.2024թ.
2.	«Երևանի հ. 92 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ա-1թ., Սվաճյան փ.)	ք. Երևան, Արգիշտիի 1 18.11.2024թ. ժամը՝ 14:30	18.10.2024թ.
3.	«Երևանի Լ. Կատվալյանի անվան հ. 93 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 69)	ք. Երևան, Արգիշտիի 1 18.11.2024թ. ժամը՝ 14:30	18.10.2024թ.
4.	«Երևանի հ. 94 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, ՀԱԹ Բ2, Անդրանիկի 133/3)	ք. Երևան, Արգիշտիի 1 18.11.2024թ. ժամը՝ 14:30	18.10.2024թ.
5.	«Երևանի հ. 95 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Բ-1 թաղ., Անդրանիկի 124)	ք. Երևան, Արգիշտիի 1 18.11.2024թ. ժամը՝ 14:30	18.10.2024թ.
6.	«Երևանի «Հեքիաթ» հ. 96 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 91)	ք. Երևան, Արգիշտիի 1 18.11.2024թ. ժամը՝ 14:30	18.10.2024թ.

7.	«Երևանի հ. 97 մսուր -մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, ՀԱԹ, Ա-3 թաղ., Սվաճյան 16	ք. Երևան, Արգիշտիի 1 18.11.2024թ. ժամը՝ 14:30	18.10.2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**